Արձանագրություն N 4
«ՀԿՓԲԸ-ԳՀԾՁԲ–19/03» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան «14» «նոյեմբերի» 2019թ.
ժ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մնացականյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Մանուկյանը
Հ. Ժամկոչյանը
Ա. Ներսիսյանը
Լ. Հարությունյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Ղազարյանը

Ի. ՀԿՓԲԸ-ԳՀԾՁԲ-19/03 ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորումը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին
(Ա. Մնացականյան)

Ընդունել ի գիտություն, որ.

- Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ «ԱՐԱՐԱՏ ԻՆԿԱՍԱՑԻԱ» ՓԲԸ-ն, 08.11.2019թ. ծանուցվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները) ներկայացնելու մասին:
- 08.11.2019թ. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ԱՐԱՐԱՏ ԻՆԿԱՍԱՑԻԱ» ՓԲԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում ՝ եթե ՀՀ պետական եկամուտների կոմիտեն հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին չի տրամադրում հարցման մասին եզրակացություն, ապա մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից հարցման մասին եզրակացությունը սահմանված ժամկետներում տրամադրվել է:
- «ԱՐԱՐԱՏ ԻՆԿԱՍԱՑԻԱ» ՓԲԸ-ի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները) ներկայացվել են հրավերով սահմանված ժամկետներում:
- Հանձնաժողովի քարտուղարի կողմից 13.11.2019թ. մասնակցի՝ հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները), գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության ՊԵԿ-ից ստացված եզրակացությունը տրամադրվել է հանձնաժողովի անդամներին:
- Մասնակցի որակավորումը հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից անհամապատասխանություն չի արձանագրվել (հայտնաբերվել):
- Հանձնաժողովի կողմից լրացված գնահատման թերթիկներում Մասնակցի որակավորումը հիմնավորող փաստաթղթերը և Հայաստանի Հանրապետության ՊԵԿ-ից ստացված եզրակացությունը Մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ, գնահատվել են բավարար:

2. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին
(Ա. Մնացականյան)

Հանձնաժողովը որոշեց.

- Ընտրված մասնակից ճանաչել «ԱՐԱՐԱՏ ԻՆԿԱՍԱՑԻԱ» ՓԲԸ -ին.

Ընտրված մասնակիցը ճանաչվել է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով.
- հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը
- ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Մնացականյան

Անդամներ՝ _____ Կ. Մանուկյան

_____ Հ. Ժամկոչյան

_____ Լ. Հարությունյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Հ. Ղազարյան